

ներով, որոնք ամաններու կը նմանին, իրենց կոնակը կաշիէ կապիչներ ամրացուած՝ բթամատներուն ամրացուելու համար: Անոնք, այս ամանները (ծնծղայ) իրար քսելով, խոպոտ ձայն մը կը հանեն իրր բաղաձայն վերոյիշեալ զանգակին: Յետոյ քահանաները կը յառաջանան, բոլորն ալ իրենց յատուկ զգեստներով, երկար շապիկներով կամ, աւելի ճիշդ, հասարակ կտաւ պարեգօտներով, որոնց վերայ կարուած են մետաքսեայ օձիքներ, ոմանք կապոյտ, ոմանք կարմիր, ոմանք կանանչ, ոսկի եւ արծաթ գիծերով: Հուսկ կուզայ եպիսկոպոսը, ոսկեդիպակ խոյրով մը, ծաղիկներով բանուած եւ տերեւներով, գունազեղ. հագած է երկար շապիկ մը եւ եպիսկոպոսական արծաթ դիպակէ վերարկու մը, ընդելուզեալ կարմիր եւ կանանչ ծաղիկներով, ներսէն կարմրաթելով աստառուած, իսկ եզերքը՝ կանանչ մետաքս: Իր աջ ձեռքով ան բռնած է ոսկեջրեալ խաչ մը, գոհարներով ընդելուզեալ, որով ան իր անցքին վրայ ժողովուրդը կ'օրհնէ: Զախ ձեռքը ունի հովուական գաւազանը (կամ տեսակ մը հնաձեւ գաւազան) յոյներուն գործածածին բաւական նման, միայն թէ գլուխը երկու օձերու գլխով չ'աւարտիր յոյներուն պէս: Բոլոր հայ եկեղեցականները իրենց կոնակին վրայ կը կրեն փոքր խաչեր, ոմանք հասարակ կարմիր տամասկեայ, ոմանք ոսկեայ կարմիր մետաքսեայ կլորի մը մէջ: Պաշակիրը ունէր այս վերջիններէն հատ մը (իւր կոնակին): Անոնք, որ եպիսկոպոսին մօտէն կը քալեն, ոչ միայն իրենց կոնակին վրայ խաչեր ունին, այլեւ իւրաքանչիւր ուսին վրայ: Թափօրի անցքին ամբողջ միջոցին անոնք երգեցին ու վերոյիշեալ նուագարաններուն վրայ նուագեցին: Եւ երբ թափօրը դաս հասաւ, խաչը խորանին աջ կողմը տարին եւ խորանին ետեւը տեղաւորեցին, եկեղեցականները շուրջանակի կանգնեցան, եւ եպիսկոպոսը իրենց մէջ: Ան օրհնութիւն տալէ վերջ, աթոռին գընաց, առանց գլխէն խոյրը հանելու նըս-

տած կամ կանգնած ատեն: Պաշն ու լանջախաչը ձեռքին դրուեցան երկու անգամ: Քահանաներէն մէկը, իր ուսերուն վրայ կարմիր խաչով, իր մօտ կանգնելով, աղօթքներ կը կարդար, կամ դասեր, աւետարան կարդալու եղանակին նման ոճով մը. նախ քան սկսիլը՝ խաչը կը համբուրէր, որմէ վերջ սարկաւազներէն մէկը զինքը կը պատէ արծաթահիւս շուրջառով մը, կանանչ եւ կարմիր ծաղիկեալ: Այսպէս զգեստաւորուած դպրաց դասին մէջ կը կանգնի խորանին առջեւ, դէմքը հասարակութեան դարձուցած. իւրաքանչիւր կողմը արծաթ մոմկալներ բռնուած են դպիրներէ. ու այսպէս կը սկսի կարդալ գիրքը, որուն կողքերը ընտիր գործըւած արծաթ տախտակներէ են: Երբ կ'աւարտէ, շուրջառը վրայէն կ'առնուի, մոմկալները կը զետեղուին բազրիկին վերայ, քահանան իր նստարանին վրայ կը քաշուի, եւ ուրիշ քահանայ մը անկէ վերջ կը կարդայ, կը հետեւի նոյն ընթացքին: Երկու դպիրներ կը յառաջանան՝ մէջտեղ կանգնելով, աղօթքներ կ'ըսեն. եւ ետ կը քաշուին, յետոյ ամէնքն ալ համախումբ կ'երգեն՝ ընկերակցութեամբ նուագարաններու ձայներուն (որոնք բոլոր այս միջոցին եպիսկոպոսին մօտ կը մնային): Անոնք երբեմն կրկին երգախումբ կը կազմեն, բոլորն ալ գիրք կարդալով, յետոյ կը դադրին, եւ հակառակ խումբ մը նոյնը կը կատարէ փոխասացարար: Պատարագէն վերջ, եպիսկոպոսը խորանին առջեւ կանգնելով՝ օրհնութիւն կ'արտասանէ եւ ժողովուրդին դառնալով կ'օրհնէ խաչովը: Յետոյ թափօրը դէպի ժողովարան կը վերադառնայ նոյն սկսուած կարգով: Հայերը Հռոմի մէջ ունին քալէճ մը, իրենց յատուկ, բոլոր օտար ժողովուրդներուն նման, հաստատուած Գրիգոր ԺԳ. Պապէն (1572-1585), ուր իրենց նորադարձները ու երիտասարդները հոռոմէական կաթոլիկ հաւատքին մէջ կը կրթուին, ընտիր խնամքով: Ունին պաշտպան կարտինալ մը եւ Յիսուսեան-